<<ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ԲԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԵՎ <<ՃԱՄԲԱՐԱԿԻ ԱԿ>>, << ԳԱՎԱՌԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>>, << ՍԵՎԱՆԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>>, <<ՎԱՐԴԵՆԻՍԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳՈՂՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ մայիսի 19-ի N 1187-Ն որոշման 2-րդ կետի ,,բ,, ենթակետը ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006 թվականի մայիսի 3-ի հրամանով հաստատված ,,Պետական բաժնեմասի (բաժնետոմսերի) կառավարման լիազորված մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողների) ընտրության մրցութային հանձնաժողովի ձևավորման, մրցույթի անցկացման ու մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջների (չափանիշների) մասին,, կարգի 1.6-րդ կետը

որոշում եմ՝

1. Ս/թ սեպտեմբերի 12-ին նշանակել և անցկացնել <<Ներքին Գետաշենի ԲԱ>> փակ բաժնետիրական և <<Ճամբարակի ԱԿ>>, <<Գավառի պոլիկլինիկա>>, <<Սևանի պոլիկլինիկա>>, <<Վարդենիսի պոլիկլինիկա>> պետական փակ բաժնետիրական ընկերությունների վերստուգողների թափուր պաշտոնների համար բաց մրցույթ:
2. Մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնին /բաժնի վարիչ՝ Ն.Մաթևոսյան/՝ սահմանված կարգով կազմակերպել մրցույթի անցկացման նախապատրաստական աշխատանքները:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն.ՊՈՂՈՍՅԱՆ